

ՀԵՅՆԷԻՑ

ՋԱԻԱԻ ԲԱԼՈՒՂԵԱՆՑԻ

I

«Es fällt ein Stern herunter
Aus seiner funkelnden Hoh'...»

Մի աստղ շեղւեց իւր ճամբից,
Ընկաւ սլալծառ երկընքից,
Ի՜նչ հենց սիրոյ աստղիկն էր,
Որ վերևից գլորւում էր:
Խընձորենուց թափւեցին
Շատ կոկոններ ու տերև,
Վերայ հասաւ չար քամին
Ըսկսեց ծողրել ու տալ ցրև:
Կարապն լըճում երգում էր—¹⁾
Մերթ դուրս լողում, մերթ սուզում...
Երգը կամաց մարում էր,
Վերջը խեղդւեց ջրերում:
Լուռ է այժմ ու մըթին.
Տերև, կոկոն ցիրուցան,
Աստղը հանգած բընաւին.
Երգը դադրած յաւիտեան:

¹⁾ Կարապը կրգում է իւր ամբողջ կեանքում մի անգամ, այն էլ մահւան ընկնելու՝ Արտեղից են—«лебединый пѣснь» Schwanengesang (կարապի երգ), —որ նշանակում են մահամերձ, վերջին մի երգ: Հէջէն զուրս է բերել ալստեղ մահւան պատկերներ:

II

«Und wüsstens, die Blumen, die Kleinen
Wie tief verwundet mein Herz...»

Թէ գիտնալին փոքրիկ ծաղկունք
Սըլտիս վերքը ծանրագին,
Կը թափէին ինձ հետ արցունք,
Որ դարմանեն իմ ցաւին:
Թէ բըլբուլներն գուշակէին,
Ոնցեմ հիւանդ, թախծագին,
Նոքա՞ անշուշտ կը երգէին—
Ամրացնելու իմ հոգին:
Թէ կըսկիծըս հասկանալին
Աստղիկները ոսկէփայլ,
Նոքա՞ երկնից կը իջնէին—
Մըխիթարանք ինձ կարգալ:
Բայց այդ ոչոք չէ իմանում,
Բացի միայն մէն-մէկից...
Նա հենց ինքն է սիրտըս փըշրում,
Սիրաըս պոկում արմատից: